8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ մայիսի 1-ից մինչև 2011թ օգոստոսի 15-ը
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ՀՀ Շիրակի մարզի Գետափ գյուղի դպրոցի տանիքի ջրհորդանների և ջրատարների իրականացում: Ներքին հարդարման բոլոր աշխատանքներ: Պատուհանների փոխարինում մետաղեպլաստով: Փայտյա հատակների նորոգում և փոխարինում նորով: ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով գյուղի դպրոցի դասասենյակների փայտյա հին պատուհանների փոխարինում մետաղեպլաստով: Վճարումը կատարվում է ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկության» ՀՀ մասնաճյուղի կողմից, ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկություն» բարեգործական կազմակերպության ֆինանսավորման հաշվին:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	ՀՀ Շիրակի մարզի Գետափ գյուղի և ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով գյուղի դպրոցները վերանորոգելու է «Դիալոգ Գրուպ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 01533033) որի նախահաշվային արժեքը կազմում է՝ 21 270 000 (քսանմեկ միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ: Առանց ԱԱՀ 20%-ի:

2

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կրթության և գիտության նախարարության և ՀՀ Շիրակի և Արագածոտնի մարզային կրթության վարչությունների հետ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է ԱՄՆ-ի Հայ կրթական հիմնարկության բարերարների խորհուրդը և ՀՀ -ում մասնաճյուղի տնօրինությունը, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամփոփ հաշվետվություններ):





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 ապրիլի 2011 թվականի N Մ-199-Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՀՈՒՇԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 24-ի N 3/3.8-1/2931-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մարտի 22-ի N 01/1642-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի մարտի 18-ի N 01/13.2/1024-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 21-ի N ԱԱ/3-4/1620-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 147 578 160 դրամ արժողությամբ «Հուշապատի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Ա. Ավետիսյան 118, ՀՎՀՀ՝ 00801721) 2011 թվականի մարտի 3-ին կնքված՝ N 01Ե/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանի 2-րդ մասնաշենքին կից հուշապատի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 147 578 160 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության

բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հուշապատի կառուցման
 Ծ Ր Ա Գ Ի Ր

4/3

1	Ծրագրի նպատակը	Գևորգյան հոգևոր ծեմարանի 2-րդ մասնաշենքին կից հուշապատի կառուցում գոհված հոգևորականների հիշատակի համար
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք
6	Ծրագրի բյուջեն	147 578 160 ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Մայր Աթոռը և հավատացյալ ժողովուրդը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	10 ապրիլի 2011թ. – 31 դեկտեմբերի 2012թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է հուշապատի կառուցում՝ 147 578 160 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Կառուցման աշխատանքներն իրականացվում են «Հորիզոն-95» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Ա. Ավետիսյան 118, ՀՎՀՀ 00801721), պայմանագիր թիվ 01Ը/011, կնքված 03.03.2011թ.:
10	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է հուշապատի կառուցում. 9 կամարներով, եռահարկ, առաջին հարկը 4 կամար, երկրորդը՝ 3, երրորդը 2, տեղադրված խաչքարերով, Հառիճի տուֆ քարից, երկ. 23մ, բարձր. 11.5մ չափերով՝ 147 578 160 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Արմավիրի մարզպետարանի և Վաղարշապատ քաղաքի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

Գլխավոր ճարտարապետ՝
 Արտավազդ Նազարեթյան

Ֆինանսական բաժնի տնօրեն՝
 Մարինե Ղազարյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 ապրիլի 2011 թվականի N Մ- 200 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-123-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ.» ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/3069-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-4/1749 -11 գրությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-123-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2011 թվականի մարտի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 639997 դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ-
քաղ. երևան

201

-Ա


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N Մ-137-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ.» ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրենի 2011 թվականի մարտի 11-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի մարտի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի մարտի 28-ի N Մ-192-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» N Մ-137-Ա որոշմանը կից ցանկի 2-րդ տողում «Դալարիկի հիմնական դպրոց» բառերը փոխարինել «Արտենիի միջնակարգ դպրոց» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ - 202-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-168-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N 3/3.8-1/77033-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 31-ի N ԱԱ/3-4/1875-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրգանական բանջարեղենի մշակության փորձացուցադրական ուսումնական կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-168-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գալուպեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00069233) 2011 թվականի փետրվարի 17-ին կնքված՝ N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրակտորի ձեռքբերում՝ 7245000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 ապրիլի 2011 թվականի N Մ 203 Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ
ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ
ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
հայկական մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/3071-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-4/1746-11 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի 2011 թվականի մարտի 16-ի և 2011 թվականի մարտի 22-ի գրությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀՈՀՀՄ) կողմից 2011-2012 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-119-Ա որոշման մեջ ու կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշման 1-ին կետում «2.009.070 ԱՄՆ-ի դոլարին» բառերը փոխարինել «2 055 070 ԱՄՆ-ի դոլարին» բառերով.

2) ծրագրի 6-րդ կետում «2,009,070 ԱՄՆ դոլար» և «237,070 ԱՄՆ դոլար (119,204 ԱՄՆ դոլար 2011 թ. և 117,866 ԱՄՆ դոլար 2012 թ.)» բառերը համապատասխանաբար փոխարինել «2 055 070 ԱՄՆ-ի դոլար» և «283 070 ԱՄՆ-ի դոլար (142 204 ԱՄՆ-ի դոլար 2011 թ. և 140 866 ԱՄՆ-ի դոլար 2012 թ.)» բառերով.

3) ծրագրի 10-րդ կետը «հեռահաղորդակցման կապի ծառայությունների վարձավճարներից ԱԱՀ-ից ազատում», բառերից հետո լրացնել «տարեկան ֆինանսական աուդիտի իրականացման վճարի ԱԱՀ-ից ազատում (աուդիտի դիմաց տարեկան վճարը կազմում է 23 000 ԱՄՆ-ի դոլար)» բառերով և «14,000 ԱՄՆ դոլար» բառերը փոխարինել «60 000 ԱՄՆ-ի դոլար» բառերով.


4) ծրագրի 11-րդ կետը «2010-11 թթ. ԲՀՈՀՀՄ-ի հաշվետվության տպագրում 4,000 ԱՄՆ դոլար», բառերից հետո լրացնել «տարեկան ֆինանսական աուդիտի իրականացում

23 000 ԱՄՆ-ի դոլար» բառերով և «կազմում են 237,070 ԱՄՆ դոլար (119,204 ԱՄՆ դոլար 2011 թ. և 117,866 ԱՄՆ դոլար 2012 թ.), որը կազմում է ԲՀՈՀՀՄ-ի 2011-12 թթ. ընդհանուր ծրագրային ծախսերի մոտ 11,8%:» բառերը փոխարինել «կազմում են 283 070 ԱՄՆ-ի դոլար (142 204 ԱՄՆ-ի դոլար 2011 թ. և 140 866 ԱՄՆ-ի դոլար 2012 թ.), որը կազմում է ԲՀՈՀՀՄ-ի 2011-12 թթ. ընդհանուր ծրագրային ծախսերի մոտ 13,8%:» բառերով:

2. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (<ՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (<ՎՀՀ՝ 02529689) 2011 թվականի մարտի 10-ին կնքված՝ N A/006/2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի տարեկան ֆինանսական աուդիտի իրականացում՝ 8 454 800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1 ապրիլի 2011 թվականի N 5 204
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N Մ-771-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N 3/3.8-1/2949-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-4/1742-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Միեր Սկրտչյան 5, ՀՎՀՀ՝ 02704593) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող «Տաթևի վերածնունդ» ծրագրի մասին» N Մ-771-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2011 թվականի փետրվարի 4-ին կնքված՝ N 114662028 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 4000000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.


2) «Ի-Վի-Քոնսալթինգ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557607) 2011 թվականի փետրվարի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գյուղական

իջևանատների զարգացման ծրագրի հայեցակարգի մշակում՝ 2720000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2011 թվականի մարտի 1-ին կնքված՝ N AT-AU-11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարեկան ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի իրականացում՝ 3083333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Իմիջ ՄԳ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05533192) 2010 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված՝ N 107 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գովազդային վահանակների սպասարկման ծառայությունների մատուցում՝ ամսական 144000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1 ապրիլի 2011 թվականի N Մ 205Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-029-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Արմենակ և Աննա Թադևոսյանների անվամբ բուժարան» բարեգործական
հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 18-ի N 3/3.8-1/2645-11
և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտեի 2011 թվականի մարտի 15-ի N ԱԱ/3-4/1448-11 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Սահմանել, որ «Արմենակ և Աննա Թադևոսյանների անվամբ բուժարան»
բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. երևան, Ե. Կողբացու 28, 72, ՀՎՀՀ՝ 02592526)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն
կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի «Արմենակ և Աննա
Թադևոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Կոշ գյուղում պոլիկլինիկայի կառուցում» ծրագրի մասին» N Մ-029-Ա
որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի
նշանակություն՝

«Դի Էս Սիսթեմս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01240937) 2011 թվականի մարտի 9-ին
կնքված՝ N 2.04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հրդեհի
ազդանշանային և տարհանման ազդարարման համակարգերի ներդրման աշխատանքների
իրականացում՝ 2421300 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ-206 -Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 31-ի N 3/3.8-2/3147-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-6/1744-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից «ԿՈՆԵ Էլեվատորս» ընկերությունից ձեռք բերված PW 06/10-19(4/4) MonoSpase Standart վերելակը (3363.44 կգ ընդհանուր քաշով, 23500 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 2750 եվրոյին համարժեք դրամ, ՄՃՓ մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ-207-Ա
քաղ. երևան


ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N 3/3.8-2/77022-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 30-ի N 3/3-6/1831-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի Իտալիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ լամպեր և լուսատուներ (18 տեղ, 1197.3 կգ ընդհանուր քաշով, 71 081 42 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 725 եվրո, ՄՃՓ S/Մ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է և անհատույց հանձնվելու է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանին:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ - 208 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N 3/3.8-2/3212-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 30-ի N 3/3-6/1832-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Մեծ Բրիտանիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ մետաղյա սանտեխնիկայի պարագաներ (5 տեղ, 1605 կգ ընդհանուր քաշով, 38 011 38 ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 616 ֆունտ ստեռլինգ, ՄՃՓ S/U) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է և անհատույց հանձնվելու է «Սուրբ Ներսես Մեծ» հիվանդանոցին:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ - 209-Ա
քաղ. երևան


ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 4-ի N 3/3.8-2/77029-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 30-ի N 3/3-6/1826-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Ֆրանսիայից, անհատ բարերար՝ Վաչե Մանուկյանի միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ վերելակներ (65 տեղ, 7082 կգ ընդհանուր քաշով, 63100 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 14112.84 եվրո, ՄՃՓ S/U) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ 210 - Ա
քաղ. երևան


ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N 3/3.8-2/77024-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 30-ի N 3/3-6/1825-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Ավստրիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ ֆոտո-թիթեղի (մեկ տեղ, 790 կգ ընդհանուր քաշով, 9030 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1050 եվրո կազմած փոխադրման ծախսերը, ՄՃՓ S/U) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ - 211 - Ա
քաղ. երևան


ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N 3/3.8-2/77021-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 30-ի N 3/3-6/1877-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Գերմանիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ լոգարանի պարագաների (9 տեղ, 1604 կգ ընդհանուր քաշով, 19250 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 395 եվրո կազմած փոխադրման ծախսերը, ՄՃՓ S/U) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է և անհատույց հանձնվելու է «Սուրբ Ներսես Մեծ» հիվանդանոցին:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ապրիլի 2011 թվականի N Մ 2/2-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 28-ի N 3/3.8-2/3041-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N 03/07.1/2768-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 25-ի N 3/3-6/1725-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից հատկացված գումարներով գնված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով Ռուսաստանից ստացված բեռի (ուսումնական, գեոդեզիական սարքեր՝ 2 տեղ, 50 կգ ընդհանուր քաշով, 87054 ռուբլի ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1 ապրիլի 2011 թվականի N Մ - **213** - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
ՔԱՂԱՔԻ ԱՆԴՐԵՅ ՍԱԽԱՐԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 8 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ
ԴԱՀԼԻՃԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/3065-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մարտի 28-ի N 01/1793-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-4/1747-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 27597500 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Անդրեյ Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցի դահլիճի կահավորում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի մարտի 18-ին կնքված N ԼՂ-Կ-02/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 27597500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության


կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան



«22» մարտի 2011թ.

**«ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Ա.Սախարովի անվան թիվ 8
ավագ դպրոցի դահլիճի կահավորում »
ԾՐԱԳԻՐ**

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքի Ա.Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցի դահլիճը անհրաժեշտ կահույքով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լեռնային Ղարաբաղ, կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 27.597.500,00 դրամ:

2

6.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքի Ա.Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ մարտի 18-ից մինչև 2011թ. օգոստոսի 30-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից 740 հատ դահլիճի նստարանների պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 27.597.500,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

4/3
Ստյոպա



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1 ապրիլի 2011 թվականի N Մ - *214* - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ
ՔԱՂԱՔԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂՈՒ ԵՎ ՔԱՐԴԱՇԻ ԶՐԱՂՔՅՈՒՐԻ
ԿԱՂՏԱԺՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 30-ի N 3/3.8-1/3135-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մարտի 30-ի N 01/1840-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-4/1751-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 5600000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղու և Քարդաշի ջրաղբյուրի կապտամշների վերակառուցման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«ԵրՃՇՊՀ» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01506385) 2011 թվականի մարտի 18-ին կնքված N ԼՂ-ՆՆ-06/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 5100000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«23» մարտի 2011թ.

**«ԼՂՀ Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղու և Քարդաշի
ջրաղբյուրի կապտածների վերակառուցման նախագծում»
ԾՐԱԳԻՐ**

1. Ծրագրի նպատակը	Վերականգնել ԼՂՀ Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղին և Քարդաշի աղբյուրը
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4. Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ԼՂՀ Մարտունի քաղաք, ջրամատակարարման բնագավառ
5. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 5.600.000,00 դրամ:
6. Բարեգործություն ստացողը	Մարտունի քաղաքի բնակիչները

2

7. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ. մարտի 18-ից մինչև 2011թ. սեպտեմբրի 18-ը:
8. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	ԵրճՇՊՀ ՊՈԱԿ-ի կողմից ԼՂՀ Մարտունի քաղաքի կոյուղու և Քարդաշի աղբյուրի կապտածների նախագծում՝ 5.100.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: Նախատեսվում է նաև վերակառուցման նախագծի փորձաքննություն՝ 500.000,00 դրամ մոտավոր արժեքով:
10. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ
12. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1 ապրիլի 2011 թվականի **Մ Մ - 2/5** - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՂԻ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԹԻՎ 141
ԳԻՇԵՐՕԹԻԿ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/3068-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N 01/1720-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N ՖԲ/ԱՆՄ-5/2340-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-4/1745-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 28368300 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի կահավորում» ծրագիրը (կցվում է):


3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (<ՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (<ՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի մարտի 21-ին կնքված N ՀՀ-Կ-09/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 28368300 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


4. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության

կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«22» մարտի 2011թ.

**«ՀՀ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի
թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի կահավորում»**

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզը անհրաժեշտ կահույքով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Երևան քաղաք, սոցիալական բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 28.368.300,00 ՀՀ դրամ:

6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ մարտի 21-ից մինչև 2011թ. օգոստոսի 21-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 28.368.300,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամիսի հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

1/1
Կարգ
✓



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1 ապրիլի 2011 թվականի N Մ-216 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-062-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱՂԵՆ-ՎՅՈՒՐԵՆՔԵՐԳԻ ԵՐԿՐԱՄԱՍՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի Բաղեն-Վյուրտենբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղի ղեկավարի 2011 թվականի մարտի 22-ի գրությունը, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի Բաղեն-Վյուրտենբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-062-Ա որոշմանը կից ցանկը կարդալ հետևյալ խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հայաստանում ԳԿԽ Բաղեն-Վյուրտենբերգի
երկրամասային կազմակերպության մասնաճյուղ
Դրոյի փողոց 22/5
Քանաքեռ-Զեյթուն
375015 Երևան/Հայաստան


Հավելված 1

4/8.5


Հայաստանում ԳԿԽ ԲՎԵԿ մասնաճյուղի կողմից 24.09.2010թ.
Գերմանիայից ներմուծված մարդասիրական բեռի ցուցակ

N	Քանակ	Փաթեթա-վորում	Նյութ	Քաշ նետոտ կգ	Քաշ բրուտոտ կգ	Արժեք եվրո
1	165	կգ	հագուստեններ և ապրանքներ՝ օգտագործված	165	177.5	115
2	82	գուլյգ	գուլյաներ	9	9.5	20
3	10	հատ	խալաթ կանացի	4	4	10
4	6	հատ	փչովի զնդակ արհեստական կաշվից	3	3	30
5	4	հատ	օգտագործված հարվածամեղմիչներ մ-ր ավտոմեքենայի համար	14	14.5	50
6	1	հատ	կիթառ ոչ էլեկտրական՝ պատյանով, օգտագործված	3	3	5
7	1	հատ	ուսապարկ	3	3	5
8	1	հատ	կիսակցորդ	600	600	1
9	1	հատ	ավտոմեքենա Դայմլեր-Բենց	1700	1700	1
			ԸՆԴԱՄՆԵԸ	2501կգ	2514.5կգ	237

Ս. Պողոսյան



Հայաստանում ԳԿԽ ԲՎԵԿ մասնաճյուղի





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1 ապրիլի 2011 թվականի Մ-217-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի Ն Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԱՐԱՔԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 18-ի N 3/3.8-1/2644-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 15-ի N ԱԱ/3-4/1450 -11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետում ավելացնել «Զինիշյան հիշատակի հիմնադրամ» բառերը:

2. Սահմանել, որ «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն:

1) «Սոնա և Արա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00054623) 2011 թվականի մարտի 3-ին կնքված՝ N 11-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արաքկիր» ԲՀ-ԵԴՍԻ Գավառի վերականգնողական կենտրոնի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների 2-րդ փուլի իրականացում՝ 28920100 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

աշխատանքների 2-րդ փուլի իրականացում՝ 28920100 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Օրթեգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00036503) 2011 թվականի մարտի 3-ին կնքված՝ N 11-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արաքկիր» ԲՀ-ԵԴՍԻ Արտաշատի վերականգնողական կենտրոնի համար վերականգնողական սարքավորումների պատրաստում՝ 1773000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՆ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ-218-Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 16-ի N 3/3.8-1/2545-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 15-ի N ԱԱ/3-4/1451-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գզալի նշանակություն՝

1) «Էլլիպս Զի Էյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2010 թվականի մարտի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի դռների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 4734335 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Գիզա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00851914) 2011 թվականի մարտի 1-ին կնքված N 1Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի տանիքի ջրամեկուսիչ համակարգի ալյումինե դետալների մոնտաժում՝ 2369250 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ-

քաղ. երևան

219

-Ա


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N 3/3.8-1/2928-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 21-ի N ԱԱ/3-4/1621-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլլիպս Զի Էյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2010 թվականի մարտի 5-ին կնքված՝ N 15/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կապի և հեռախաղորդակցության մալուխների տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1407600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ - 220. - Ա
քաղ. Երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-885-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N 3/3.8-1/2943-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-4/1743-11 եզրակացությունները **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարոնյան 21, ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից իրականացվող «Պետության կարիքների համար տուբերկույոզով հիվանդների սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի մասին» N Մ-885-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱԻԱ Նատուրալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04412776) 2011 թվականի մարտի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մինչև սույն թվականի հուլիսի 31-ը նշված ապրանքների մատակարարում՝ 3971000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ - 221 - Ա
քաղ. երևան


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-400-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ»
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 22-ի N 3/3.8-1/2835-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 18-ի N ԱԱ/3-4/1571-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-400-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոտայք» ՋՕԸ հետ (ՀՎՀՀ՝ 03524881) 2011 թվականի մարտի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի մարտի 3-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ոռոգման ջրի մատակարարում՝ 157139 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 ապրիլի 2011 թվականի N Մ - 222 - Ա
քաղ. երևան**


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-401-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 22-ի N 3/3.8-1/2834-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 21-ի N ԱԱ/3-4/1619-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-401-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2010 թվականի հունիսի 8-ին կնքված՝ N 113439520 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 505000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ - 223 - Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-092-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 22-ի N 3/3.8-1/2828-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 18-ի N ԱԱ/3-4/3785-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն - 2011» ծրագրի մասին» N Մ-092-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բիզնես սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507456) 2011 թվականի փետրվարի 21-ին կնքված՝ N ՀՀ-Կ-06/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեղեկատվական ստենդի և կանխիկ նվիրատվությունների արկղի պատրաստում՝ 654774 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1 ապրիլի 2011 թվականի N Մ- 224-Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 18-ի N 3/3.8-2/2621-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 21-ի N ԱԱ/3-6/1613-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից «Կլիվետ» ընկերությունից ձեռք բերված օդափոխության, ջեռուցման և հովացման համակարգի ապրանքները (7034.30 կգ ընդհանուր քաշով, 76438.26 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 6600.53 եվրոյին համարժեք դրամ, ՄՃՓ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 ապրիլի 2011 թվականի N Մ-225-Ա
քաղ. երևան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-927-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՅՄՈՒՆԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՍՈՑԻԱՅԻԱ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 12-ի N 3/3.8-2/2398-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 16-ի N ԱԱ/3-6/14653-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ ՆԱՏՕ-ի «Գիտությունը հանուն խաղաղության և անվտանգության» ծրագրի սահմաններում ֆինանսավորվող «Արձագանքում սեյսմիկ վտանգին Կովկասում» ծրագրի շրջանակներում Հայկական սեյսմոլոգիայի և երկրի ֆիզիկայի ասոցիացիայի հասցեով ուղարկված սեյսմիկ սարքերը (7 տեղ, 129 կգ ընդհանուր քաշով, 17680.65 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 800 եվրո, փաթեթավորման ծախսերը կազմում են 312.50 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայկական սեյսմոլոգիայի և երկրի ֆիզիկայի ասոցիացիայի կողմից իրականացվող «Արձագանքում սեյսմիկ վտանգին Կովկասում» ծրագրի մասին» N Մ-927-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի N Մ - *226* - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՂՈՒ ՄԱՐԶԻ «ՎԱՆԱՁՈՐԻ
ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՎԵՐԱՆՈՐԴ-
ԳՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 22-ի N 3/3.8-1/2827-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մարտի 17-ի N 01/1529-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի մարտի 17-ի N 07/07.2/2397-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 18-ի N ԱԱ/3-4/1574-11 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի մարտի 16 -ի N 101/104.3/1267-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 3735400 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի համակարգչային դասարանի վերանորոգում և համակարգիչների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Դանիել» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06800345) 2011 թվականի փետրվարի 14-ին կնքված N ՀՀ/ՎՄ-01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային դասարանի վերանորոգում՝ 1750300 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԴՈՒՖԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02545909) 2011 թվականի մարտի 4-ին կնքված N ԱՏ-02/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 1985100 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան



«14» մարտի 2011թ.

**«ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի
համակարգչային դասարանի վերանորոգում և համակարգիչների ձեռքբերում»
ԾՐԱԳԻՐ**

1.	Ծրագրի նպատակը	Վերանորոգել և ապահովել ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի համակարգչային դասարանը համակարգիչներով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Լոռու մարզ, Վանաձոր քաղաք, սոցիալական բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 3.735.400,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ը

2

7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ փետրվարի 14-ից մինչև 2011թ.մայիսի 04-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Դանիել» ՍՊԸ-ի կողմից համակարգչային սենյանի վերանորոգում՝ 1.750.300,00 դրամ առանց ԱԱՀ-ի: «ԴՈԼՖԻՆ» ՍՊԸ-ից ներկայացված պայմանագրի թիվ 1 հավելվածում թվարկված գույքի, զնում, տեղափոխում և անհատույց հանձնում՝ 1.985.100,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարձերի նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

4/2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2011 թվականի **ՄՄ - 227** - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ
ԾԱՂԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈ-
ՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N 3/3.8-1/2951-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մարտի 23-ի N 01/1665-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի մարտի 23-ի N 03/07-1/2591-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-4/1739-11 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011 թվականի մարտի 28-ի N 01/13.3/1143-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 4541700 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի մարտի 11-ին կնքված N ՀՀ-4-07/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 4541700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության

կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան



«11» մարտի 2011թ.

**« ՀՀ Տավուշի մարզի Ներքին ծառայության գյուղի
միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում»
ԾՐԱԳԻՐ**


1.	Ծրագրի նպատակը	Մասամբ ապահովել ՀՀ Տավուշի մարզի Ներքին ծառայության գյուղի միջնակարգ դպրոցը անհրաժեշտ կահույքով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Տավուշի մարզ, Ներքին ծառայության գյուղ, կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 4.541.700,00 դրամ:

2

6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Տավուշի մարզի Ներքին ծառայության գյուղի միջնակարգ դպրոցը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ մարտի 11- ից մինչև 2011 հունիսի 11-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծառայության գյուղի միջնակարգ դպրոցի համար պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 4.541.700,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության և կրթության նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 ապրիլի 2011 թվականի N Մ-228-Ա
քաղ. երևան**

**«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՁԵՅԹՈՒՆ - 154» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 12-ի N 3/3.8-1/2337-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մարտի 15-ի N 01/1481-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 11-ի N ԱԱ/3-4/1335-11 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Պարոյր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 114.5 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Ձեյթուն - 154» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2007 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N Ա.013.11.07.5528 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011-2012 թվականների ընթացքում բնական գազի մատակարարում՝ տարեկան 1750000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էյ-Ի-Ջի սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2010 թվականի հուլիսի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011-2012 թվականների ընթացքում գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ տարեկան 160000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երևան ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2010 թվականի հոկտեմբերի 12-ին

կնքված՝ N 7-14-14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011-2012 թվականների ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ տարեկան 210000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2011 թվականի հունվարի 26-ին կնքված՝ N 882949 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011-2012 թվականների ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Գործադիր տնօրեն

Հ. Ստեփանյան

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
«ՁԵՅԹՈՒՆ-154»

1. Ծրագրի նպատակը	Երևանի «Թիվ 154 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ - ի 132 սաների և 21 աշխատակիցների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում՝ սննդի, հագուստի, խաղալիքների, հիգիենիկ և այլ պարագաների տրամադրում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Հարկային և մաքսային արտոնությունների տրամադրում: Բարեգործին խրախուսում:
3. Բարեգործը	Ամերիկյան «AGM» ոչ առևտրային կազմ, ԱՄՆ, ք. Փասադենա:
4. Ծրագիրը կատարողը	«ԱՌ-ԴԱ» ԲՀ, Երևան, Պարույր Մկաչի փող. 9, ՀՎՀՀ՝ 00057312:
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան: Սոցիալ-կրթական ոլորտ:
6. Ծրագրի բյուջեն	114,5 մլն դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Երևանի քաղաքապետարան:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրն իրականացվում է 2007 թվականից: Ծրագրի այս հատվածն իրականացվում է 01. 01. 2011 թ. - 31.12.2015 թ. և լինելու է շարունակական:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մանկապարտեզի բոլոր ծախսերի (բացառությամբ աշխատակազմի աշխատավարձերի) հովանավորում և այլ բարեգործական օգնության տրամադրում՝ 114,5 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, 01. 01. 2011 թ. - 31. 12. 2015 թ.
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	- սնունդ - 51,0 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, յուրաքանչյուր տարի - 10,2 մլն դրամ. - կոմունալ ծախսերի ֆինանսավորում - 15,5 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, յուրաքանչյուր տարի - 3,1 մլն դրամ. - տնտեսական և բժշկական օգնության ծախսերի ֆինանսավորում - 2,0 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, յուրաքանչյուր տարի - 0,4 մլն դրամ. - այլ ծախսեր - 1,0 մլն դրամ, յուրաքանչյուր տարի - 0,2 մլն դրամ. - բարեգործական օգնության ներմուծում (հագուստ, սնունդ, կոշիկ, կահույք, խաղալիք, հիգիենիկ, խոհանոցային և այլ պարագաներ) - 45,0 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, յուրաքանչյուր տարի - 9,0 մլն դրամ:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում, ծրագիրն իրականացվում է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի սահմաններում:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ	ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, Երևանի քաղաքապետարան:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ ԿԲԾՀՀ ներկայացվող հաշվետվությունների և «ԱՌ-ԴԱ» ԲՀ հոգաբարձուների պարբերական այցելությունների միջոցով: